

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

**Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն**

NN	Նպատակ	Միջոցառումներ	Ակնկալվող արդյունք	Համակատարող	Ժամկետ	Ֆինանսավորման աղբյուր և կանխատեսվող չափ
1	2	3	4	5	6	7
<b>Գիտություն</b>						
26.	Գիտության ոլորտը կարգավորող իրավական դաշտի կատարելագործում	26.1 «Հայաստանի Հանրապետության գիտական կազմակերպություններում գիտական կադրերի տարակարգը և չափանիշները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և ներկայացում ՀՀ Վարչապետի աշխատակազմ	Սահմանված են գիտական կադրերի արդյունավետության նվազագույն պայմանները՝ ըստ տարակարգերի, որը հանդիսանում է հիմք՝ 2024 թվականին համապետական ատեստավորման անցկացման համար	Գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2022թ. մարտի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում
		26.2 «Հայաստանի Հանրապետությունում գիտության և տեխնիկայի զարգացման 2023-2027 թվականների գերակայությունները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և ներկայացում ՀՀ Վարչապետի աշխատակազմ	Սահմանված են գիտության ոլորտի գերակա ուղղությունները, որոնք հիմք են հանդիսանում ոլորտային ռազմավարությունների մշակման և ըստ այդ ուղղությունների հավելյալ ֆինանսավորման ծրագրերի իրականացման համար	Գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2023թ. մայիսի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում
		26.3 «Հայաստանի Հանրապետության գիտական կազմակերպությունների կառուցվածքին ներկայացվող	Սահմանված են կազմակերպությունների կառուցվածքին ներկայացվող պահանջները	Գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2023թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում

		պահանջները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և ներկայացում ՀՀ Վարչապետի աշխատակազմ			չի պահանջվում
	26.4 «Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային, նպատակային-ծրագրային և թեմատիկ (դրամաշնորհային) ֆինանսավորման նոր կարգերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և ներկայացում ՀՀ Վարչապետի աշխատակազմ	ՀՀ կառավարության հաստատմանն են ներկայացված ա) բազային ֆինանսավորման նոր կարգը, ներառված են կազմակերպությունների ֆինանսավորման կատարողականի վրա հիմնված մեխանիզմներ, բազային ֆինանսավորման համար սահմանված են ֆինանսավորման ենթակառուցվածքի պահպանման և բոնուսային կամ ֆինանսավորման նվազեցման մեխանիզմները բ) թեմատիկ (դրամաշնորհային) ֆինանսավորման նոր կարգը, գ) նպատակային-ծրագրային ֆինանսավորման նոր կարգը, որում սահմանվում են արդյունքի ձեռքբերման, արդյունքի գնահատման և միջանկյալ մշտադիտարկման ընթացակարգերը	Գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2022թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում
	26.5 «Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի զարգացման 2022-2026 թվականների ռազմավարական ծրագիրը և դրա իրականացման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և ներկայացում ՀՀ Վարչապետի աշխատակազմ	Ամրագրված են ՀՀ գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառում 2022-2026 թվականներին իրականացվելիք պետական քաղաքականության հիմնական ուղղությունները, նպատակները, այդ նպատակների ձեռքբերմանն ուղղված մարտավարություններ, առկա են մարտավարություններին համապատասխան	Գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2022թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում

			միջոցառումների և արդյունքների գնահատման առանցքային ցուցանիշներ			
		26.6 «Հայագիտության և հումանիտար գիտությունների ոլորտի զարգացմանն ուղղված ծրագիրը և ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և ներկայացում ՀՀ Վարչապետի աշխատակազմ	Հաստատված է հայագիտության և հումանիտար գիտությունների ոլորտի զարգացմանն ուղղված ծրագիրը, ծրագրի իրականացման միջոցառումները	Գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2023թ. մարտի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում
27.	Մրցունակ գիտական գործունեության համար նպաստավոր ենթակառուցվածքների զարգացում	27.1 Գիտական կենտրոնները ժամանակակից սարքավորումներով վերազինում ու համատեղ օգտագործման գիտական սարքավորումների կենտրոնների ստեղծում	Գիտական կենտրոնները վերազինված են ոլորտային համալիր հետազոտությունների համար անհրաժեշտ սարքավորումներով՝ յուրաքանչյուր տարի 4-6 խոշոր սարքավորում, առկա են համատեղ օգտագործման գիտական սարքավորումների 3-4 կենտրոն	Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն, Էկոնոմիկայի նախարարություն, Գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2022-2026թթ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե, ԵՄ դրամաշնորհային միջոցներ 2022թ. 3,580,000.0 ՀՀ դրամ 2023թ. 5,160,000.0 ՀՀ դրամ 2024թ. 6,740,000.0 ՀՀ դրամ 2025թ. 8,320,000.0 ՀՀ դրամ 2026թ. 9,900,000.0 ՀՀ դրամ
		27.2 Գիտական կենտրոնների վերանորոգում	Առկա են թվով 10 վերանորոգված գիտական կենտրոններ, որոնք գրավիչ են միջազգային համագործակցության, նոր կադրերի ներհոսքի և արդյունավետ աշխատանքի համար	Գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2022-2025թթ. հոկտեմբերի 2-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե 2022թ. 980,000.0 ՀՀ դրամ 2023թ. 2,940,000.0 ՀՀ դրամ

					<p>2024թ. 2,940,000.0 ՀՀ դրամ 2025թ. 2,940,000.0 ՀՀ դրամ ԵՄ աջակցության ծրագիր 2022թ. 7,200,000.0 ՀՀ դրամ 2023թ. 21,600,000.0 ՀՀ դրամ 2024թ. 21,600,000.0 ՀՀ դրամ 2025թ. 21,600,000.0 ՀՀ դրամ</p>	
		<p>27.3 Հետազոտության բնագավառով մոտ փոքր գիտական կազմակերպությունները խոշոր գիտական կենտրոններում միավորմանն ուղղված պետական ծրագրերի իրականացում</p>	<p>Առկա է հետազոտությունների համար ավելի նպաստավոր միջավայր, ինչպես նաև մարդկային և ֆիզիկական ռեսուրսի արդյունավետ օգտագործման պայմաններ: Տարեկան 1-2 միավորված կենտրոններ</p>	<p>Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն, Էկոնոմիկայի նախարարություն, Գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)</p>	<p>2023-2026թթ., հոկտեմբերի 2-րդ տասնօրյակ</p>	<p>ՀՀ պետական բյուջե, ԵՄ դրամաշնորհային միջոցներ 2023թ. 538,000.0 ՀՀ դրամ 2024թ. 1,175,000.0 ՀՀ դրամ 2025թ. 1,739,000.0 ՀՀ դրամ 2026թ. 2,329,000.0 ՀՀ դրամ</p>
		<p>27.4 «Նորարարության և գիտատար ձեռնարկատիրության</p>	<p>Ստեղծված է գիտական կազմակերպություններում կամ բուհերում առկա</p>	<p>Էկոնոմիկայի նախարարություն, Բարձր</p>	<p>2023թ մայիսի 1-ին տասնօրյակ</p>	<p>ՀՀ պետական բյուջե</p>

	<p>խթանմանն ու աջակցությանն ուղղված տեխնոլոգիաների փոխանցման կառույցի ստեղծման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և ներկայացում ՀՀ Վարչապետի աշխատակազմ</p>	<p>առևտրայնացման պոտենցիալ ունեցող մշակումները վերհանող և դրանց առևտրայնացման գործընթացն ուղղորդող կառույց</p>	<p>տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն Գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)</p>		
	<p>27.5 Գիտությունից բիզնես ռիսկային նախաձեռնությունների գնահատման և ներդրումների ազգային հիմնադրամի ստեղծում</p>	<p>Ստեղծված է Գիտությունից բիզնես ռիսկային նախաձեռնությունների գնահատման և ներդրումների ազգային հիմնադրամը</p>	<p>Էկոնոմիկայի նախարարություն, Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն, Գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)</p>	<p>2025թ. հոկտեմբեր 1-ին տասնօրյակ</p>	<p>ՀՀ պետական բյուջե 10,000,000 ՀՀ դրամ</p>
	<p>27.6 Գիտական և գիտատեխնիկական բնագավառում միջպետական կամ միջգերատեսչական պայմանագրերի և համաձայնագրերի կնքում</p>	<p>Առկա են աշխարհի առավել զարգացած պետությունների և դրանց գերատեսչությունների կամ միջազգային կազմակերպությունների հետ համագործակցություն, որոնց շրջանակներում իրականացվում են ինչպես համաշխարհային նշանակության հետազոտություններ, այնպես էլ մի շարք շարժունակության ծրագրեր: Տարեկան միջինում 2 միջպետական համաձայնագիր ԵՄ, Արևելյան Ասիայի պետությունների և ԱՄՆ համապատասխան կառույցների հետ</p>	<p>Գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)</p>	<p>2022թ. սեպտեմբերի 1-ին տասնօրյակ, 2023-2026թթ. ապրիլի 3-րդ տասնօրյակ</p>	<p>ՀՀ պետական բյուջե 2022թ. 300,000.0 ՀՀ դրամ 2023թ. 400,000.0 ՀՀ դրամ 2024թ. 500,000.0 ՀՀ դրամ 2025թ. 600,000.0 ՀՀ դրամ 2026թ. 700,000.0 ՀՀ դրամ</p>
	<p>27.7 Եվրոպական շրջանակային ծրագրերի հետ ասոցացման և շրջանակային ծրագրերում Հայաստանի ակտիվ մասնակցության խթանմանը</p>	<p>Առկա են Եվրոպական շրջանակային ծրագրերին Հայաստանի մասնակցության խթանման մեխանիզմներ</p>		<p>2022թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ</p>	<p>ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում</p>

		միտված ծրագրերի իրականացում				
28.	Գիտության ոլորտում աշխատողների որակավորման բարձրացում և երիտասարդ կադրերի ներգրավում	28.1 Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցությանն ուղղված ծրագրերի իրականացում	Առկա են ծրագրի շահառու ՀՀ առաջատար խմբերում և/կամ արտերկրի լավագույն կենտրոններում ասպիրանտական ուսուցում անցած մոտ 400 ասպիրանտ 2022թ. 15 2023թ. 25 2024թ. 35 2025թ. 155 2026թ. 170	Գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2022-2026թթ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե 2022թ. 150,000.0 ՀՀ դրամ 2023թ. 250,000.0 ՀՀ դրամ 2024թ. 350,000.0 ՀՀ դրամ 2025թ. 1,550,000.0 ՀՀ դրամ 2026թ. 1,700,000.0 ՀՀ դրամ
		28.2 Հետդոկտորական հետազոտությունների ծրագրերի իրականացում	Առկա են արտերկրի լավագույն կենտրոններում առաջատար հետազոտական ծրագրերին մասնակցած երիտասարդ հետազոտողներ, նորավարտ կամ գիտական աստիճան ունեցող առնվազն 200 երիտասարդ հետազոտողներ 2022թ. 24 2023թ. 36 2024թ. 48 2025թ. 52 2026թ. 68	Գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2022-2026թթ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե 2022թ. 268,800.0 ՀՀ դրամ 2023թ. 403,200.0 ՀՀ դրամ 2024թ. 537,600.0 ՀՀ դրամ 2025թ. 582,400.0 ՀՀ դրամ 2026թ. 761,600.0 ՀՀ դրամ
		28.3 Արտերկրի լավագույն գիտական կենտրոններում գիտական կազմակերպությունների	Առկա են առնվազն 400 վերապատրաստված գիտաշխատողներ.	Գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2023-2026թթ. մարտի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե 2023թ.

		աշխատակիցների մասնագիտական վերապատրաստման և որակավորման բարձրացման միջին և երկարաժամկետ ծրագրեր	2023թ. 50 2024թ. 75 2025թ. 125 2026թ. 150			560,000.0 ՀՀ դրամ 2024թ. 840,000.0 ՀՀ դրամ 2025թ. 1,400,000.0 ՀՀ դրամ 2026թ. 1,680,000.0 ՀՀ դրամ
29.	Գիտության ոլորտում պետական ֆինանսավորման արդյունավետության բարձրացում	29.1 Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրերում ընդգրկված գիտական կադրերի աշխատավարձերի նորմավորման գործընթացի իրականացում	2021 թվականին գիտական կադրերի առեստավորման արդյունքների հիման վրա գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրերում ընդգրկված գիտական կադրերի աշխատավարձերի աստիճանական ավելացում՝ 2025 թվականին հասցնելով հետևյալ ցուցանիշների՝ լաբորանտ կամ ճարտարագետ՝ 138.3 հազ. դրամ, ավագ լաբորանտ կամ ավագ ճարտարագետ՝ 179.0 հազ. դրամ, կրտսեր գիտաշխատող՝ 210.0 հազ. դրամ, գիտաշխատող՝ 276.0 հազ. դրամ, ավագ գիտաշխատող՝ 343.0 հազ. դրամ, առաջատար գիտաշխատող՝ 443.8 հազ. դրամ, գլխավոր գիտաշխատող՝ 552.9 հազ. դրամ, գիտական խմբի ղեկավար՝ 410.0 հազ. դրամ, գիտական ստորաբաժանման ղեկավար՝ 477.2 հազ. դրամ	Գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2022-2025թթ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե՝ ավելացումը նախորդ տարվա նկատմամբ 2022թ. 3,625,615.2 2023թ. 2,271,686.4 2024թ. 2,439,240.0 2025թ. 2,010,078.0

		<p>29.2 «Գիտական կադրերի համապետական ատեստավորման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և ներկայացում ՀՀ Վարչապետի աշխատակազմ</p>	<p>Հաստատված է գիտական կադրերի համապետական ատեստավորման ծրագիրը, որը հիմք է հանդիսանալու արդյունավետության բարձր պահանջներին համապատասխանող գիտական աշխատողների տարակարգման և ըստ գիտական աշխատողների պաշտոնների անվանացանկի գիտական կազմակերպություններին հատկացվող ֆինանսավորման վերանայման համար</p>	<p>Գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)</p>	<p>2024թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ</p>	<p>ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում</p>
		<p>29.3 «Գիտական կազմակերպությունների կատարողականի գնահատման մեթոդաբանությունը և կատարողականի հիման վրա միջոցառումների իրականացման ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և ներկայացում ՀՀ Վարչապետի աշխատակազմ</p>	<p>Հաստատված է կազմակերպությունների կատարողականի գնահատման մեթոդաբանությունը և իրականացված է գիտական կազմակերպությունների կատարողականի առաջնային գնահատում: Առավել բարձր կատարողականով կազմակերպություններում բազային ֆինանսավորման 5- ամյա մեխանիզմի ներդրում: Գիտական կադրերի պատրաստման բոնուսային ծրագրի իրականացում բազային ֆինանսավորման շրջանակներում</p>	<p>Գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)</p>	<p>2022թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ 2023թ. ապրիլի 2-րդ տասնօրյակ 2024թ. մարտի 2-րդ տասնօրյակ</p>	<p>ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում</p>
		<p>29.4 Վերահիմնադրման կամ հեռավար դեկավարվող լաբորատորիաների ստեղծում</p>	<p>Առկա են ՀՀ վերադարձած շուրջ 60 գիտնական և շուրջ 60 հեռավար դեկավարվող գիտական խմբեր, որոնք բացի գիտական ժամանակակից հետազոտություններից իրականացնում են նաև բարձր տեխնոլոգիական ոլորտում</p>	<p>Գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)</p>	<p>2022-2026թթ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ</p>	<p>ՀՀ պետական բյուջե 2022թ. 446,000.0 ՀՀ դրամ 2023թ. 692,000.0 ՀՀ դրամ</p>



		ստեղծագործական աշխատանքի ընդունակ կադրերի պատրաստում			2024թ. 938,000.0 ՀՀ դրամ 2025թ. 1,184,000.0 ՀՀ դրամ 2026թ. 1,676,000.0 ՀՀ դրամ
	29.5 Գիտության ոլորտի կառավարման միասնական էլեկտրոնային հարթակի ներդրում	Ներդրված են առցանց ռեժիմով բոլոր մակարդակներում անհատ հետազոտողից մինչև գիտական կազմակերպություն արդյունավետության մշտադիտարկման գործընթացի մեխանիզմներ, առկա է խնդիրների վաղաժամ վերհանման և հասցեագրման գործիքակազմ, 2023 թվականին թողարկված է լավարկված և օգտագործողին հարմարեցված տարբերակը		2022թ. մայիսի 3-րդ. տասնօրյակ, 2023թ. նոյեմբերի 3-րդ. տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե 2023թ. 5,000.0 ՀՀ դրամ
	29.6 Հասարակական, հայագիտության և հումանիտար գիտությունների բնագավառների հետազոտությունների աջակցությանն ուղղված ծրագրերի իրականացում	Իրականացված են վերջնարդյունքի և հետազոտության որակի բարձր մակարդակի սահմանմամբ մի շարք թիրախային ծրագրեր	Գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2023թ. ապրիլի 3-րդ. տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե 2,500,000.0 ՀՀ դրամ
	29.7 Երկակի նշանակության հետազոտությունների աջակցությանն ուղղված ծրագրի իրականացում	Ավելացված են պաշտպանական և քաղաքացիական նշանակության հետազոտությունների իրականացման համար հատկացվող միջոցների ծավալները և ծրագրերի տևողությունը	Գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2022թ. նոյեմբերի 1-ին տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե 2023թ. 200,000.0 ՀՀ դրամ
	29.8 Կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված գիտական նախագծերի	Բարելավված են կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված գիտական նախագծերի հայտերի	Գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2022թ. նոյեմբերի 3-րդ. տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե 2023թ.

		աջակցություն	մրցույթի պայմանները, աճել է մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված թեմաների քանակը նախորդ մրցույթի թեմաների քանակի համեմատ			120,000.0 ՀՀ դրամ
		29.9 Գերակա ուղղություններով հետազոտությունների աջակցությանն ուղղված ծրագրերի իրականացում	Տրամադրվել են հավելյալ ֆինանսական միջոցներ հետևյալ առաջատար ուղղություններին՝ տվյալագիտություն, արհեստական բանականություն, քվանտային տեխնոլոգիաներ, խելացի գյուղատնտեսություն, կենսատեխնոլոգիա, նյութագիտություն, քիմիա, ֆիզիկա, մաթեմատիկա և գերակա ճանաչված այլ ուղղություններին	Գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2024թ. հունվարի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե 2024թ. 540,000.0 ՀՀ դրամ
30.	Ապահովել Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանների շնորհման և կոչումների շնորհման արդյունավետ համակարգ	30.1 ՀՀ կառավարության 09.07.2001թ. N 615 որոշմամբ հաստատված «ՀՀ-ում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգ»-ի փոփոխությունների նախագծի ներկայացում ՀՀ Վարչապետի աշխատակազմ	Սահմանված են Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի դրույթներ, որոնք սուբյեկտիվ մեկնաբանման առիթ չեն տալիս		2022թ. փետրվարի 1-ին տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
		30.2 «Հայաստանի Հանրապետության գիտական աստիճաններ և կոչումներ շնորհելու մասնագիտությունների անվանացանկերը հաստատելու և ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020 թվականի հունիսի 15-ի N 13-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանի ընդունում	Արդի գիտահետազոտական ուղղություններին համարժեք գիտական աստիճանաշնորհման և կոչումների շնորհման անվանացանկերը համապատասխանեցված են արդի գիտական պոտենցիալին		2022թ. հունվարի 2- րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում

		30.3 Հայաստանի Հանրապետությունում հրատարակվող գիտական պարբերականներին առաջադրվող պայմանների վերամշակում և հաստատում ԲՈԿ-ի նախագահի հրամանով	Առկա են գիտական պարբերականներին առաջադրվող նոր պահանջներ, որոնց բավարարելը կօժանդակի միջազգային համագործակցությանը և պարբերականների՝ միջազգային գիտական շտեմարաններում ընդգրկվելուն	Գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2022թ. մարտի 1-ին տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
		30.4 ՀՀ կառավարության 08.08.1997թ. N 327 որոշմամբ հաստատված «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգ»-ի փոփոխությունների նախագծի ներկայացում ՀՀ Վարչապետի աշխատակազմ	Սահմանված են Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի դրույթներ, որոնք նպաստում են միջազգային համագործակցությանը և ՀՀ-ում իրականացվող գիտական հետազոտությունների միջազգայնացմանը	Գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2023թ. սեպտեմբերի 1-ին տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
31.	Գրագործության դեմ պայքարի արդյունավետության բարձրացում	31.1 «Հայաստանի Հանրապետությունում շնորհված գիտական աստիճանից զրկելու կարգ»-ի նախագծի ներկայացում ՀՀ Վարչապետի աշխատակազմ	Սահմանված է կարգ, որը հնարավորություն է տալիս հաստատված գիտական աստիճանից զրկել, եթե որոշակի ժամկետում ատենախոսության մեջ հայտնաբերվել են այլ աղբյուրներից առանց հղումների փոխառված նյութեր	Գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2023թ. հոկտեմբերի 1-ին տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
		31.2 Գրագործության դեմ պայքարի համակարգչային ծրագրի նոր ֆունկցիոնալությամբ համալրում	Գրագործության դեպքերի բացահայտման արդյունավետ համակարգչային ծրագիրը ներդրված է, որը հաշվի է առնում գրագործության արդի ձևերը՝ նպաստելով ատենախոսությունների մեջ առանց հղումների փոխառված նյութերի հայտնաբերման աստիճանի բարձրացմանը		2023թ. մայիսի 2-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում